38-ՐԴ ՆԻՍՏ

19 նոյեմբերի 1918թ.

Նախագահում է *Գ. Տեր-Խաչատրյան.* մինիստրական օթյակում են՝ Մինիստր-նախագահ, արտաքին գործոց, ներքին գործոց և իրավարարության մինիստրները:

Նախագահը կարդում է օրակարգը.

1. Հարցումներ և հարցապնդումներ.
2. Դպրոցական հանձնաժողովի զեկուցումը.
3. Մի խումբ պատգամավորների առաջարկը Ախալքալաքի գաղթականների վերադարձի մասին.
4. Զինվորական մինիստրության արտակարգ ծախքերի համար ութ միլիոնի վարկ բանալու մասին.

5. Օրինագիծ երկաթուղային կայարանի ծառայողների համար կոոպերատիվ խանութ բանալու մասին-գ. ընթերցում.
6. Հատուկ պառլամենտական կոմիսիայի ընտրություն գեն. Պլատոնովի կոմիսիայի գործունեությունը և դրամական հաշիվը քննելու համար.
7. Պատգամավոր Արշ. Մելիքյանի հայտարարությունը խորհրդարանին այն մասին, որ ինքն այլևս չի կարող մնալ խորհրդարանի անդամ.
8. Ընթացիկ գործեր:

Մ. Հարությունյան - Առաջին հերթին քննել այն հարցերը, որոնք անհետաձգելի են և հարցերն ու հարցապնդումները թողնել վերջընթեր հերթին-ընդունվում է:

Կարդացվում, ընդունվում և վերջնականապես հաստատվում է զինվորական մինիստրին արտակարգ ծախքերի համար ութ միլիոն վարկ բանալու մասին օրինագիծը:

Ընդունվում է առաջարկ. 3 հոգուց բաղկացած պառլամենտական մի կոմիսիա կազմել՝ քննելու գեն. Պլատոնովի կոմիսիայի գործունեությունը և կորպուսի լիկվիդացիայի ենթարկված հաշիվները՝ թե Թիֆլիսում և թե Երևանում:

Շտատային բոլոր տեսակի ծախքերը կատարել նոյեմբեր ամսի համար՝ համաձայն նախահաշվի, անցնում է միաձայն և վերջնականապես հաստատվում և հանձնարարվում է կառավարության:

Երկար վիճաբանության տեղիք է տալիս պատգամավոր Արշ. Մելիքյանի հրաժարականը և նրա փոխարեն սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի առաջարկը Ղարաբեկյանին ընդունելու մասին: Մասնակցում են վիճաբանությանը՝ Մ. Հարությունյան, Հ. Ազատյան, Հ. Բուդաղյան, Ս. Մամիկոնյան, Թ. Ավդալբեկյան, Ս. Թորոսյան, Ն. Աղբալյան, իրավարարության մին. Ս. Հարությունյան, Հ. Ստեփանյան: Հախակողմյան ֆրակցիաների ներկայացուցիչները և Ս. Մամիկոնյան պնդում ու հիմնավորում են իրենց պահանջը՝ մեծամասնականներին անկախ սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայից մի տեղ տալու և Ղարաբեկյանին պատգամավոր ճանաչելու մասին, ընդհակառակը՝ կենտրոնի և աջակողմյան ֆրակցիաները պնդում են ու շեշտում իրենց կարծիքի օրինականությունը, այսինքն մեծամասնականներին տեղ տալը ի հաշիվ սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի և այն աննորմալ փոխհարաբերությունը, որ կարող է ստեղծվել խորհրդարանում, եթե իրոք ընդունվի այն, ինչ որ առաջարկում են ծախերը. այսինքն նորանոր խմբակցություններ, նոր հոսանքներ կարող են առաջարկել իրենց ներկայացուցիչներին ընդունել խորհրդարան՝ մեծամասնականների օրինակով:

Ընդունվում է դաշնակցական ֆրակցիայի բանաձևը - Արշ. Մելիքյանի հրաժարականն ու Ղարաբեկյանի մանդատը հանձնել մանդատային հանձնաժողովին՝ ի քննություն:

Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան ի նշան բողոքի հեռանում է նիստից ամբողջ կազմով:

Դ. Զուբյան - Էսէռական ֆրակցիայի կողմից առաջարկում է հանձնարարել մանդատային հանձնաժողովին, որ հաջորդ նիստին անպայման բերի քննության արդյունքը ու եզրակացությունը:

Դպրոցական հանձնաժողովի զեկուցումը Հայաստանի դպրոցական գործի վերաբերմամբ լսելով, խորհրդարանը որոշեց հանձնել այն կառավարությանը՝ թվական տվյալներով լրացնելու և շատ կարճ միջոցում խորհրդարան վերադարձնելու:

Հարցերն ու հարցապնդումները հետաձգվում են հետագա նիստին:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 11-ին:

«Զանգ», 18 դեկտեմբերի 1918թ.